

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ 2022-2023 ՌԻՍԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

26.05.2023



Սիրելի՛ շրջանավարտներ

Ընդունե՛ք իմ ամենաջերմ շնորհավորանքները՝ այսօր ձեզ համար հնչող Վերջին զանգի կապակցությամբ:

Բոլորիդ համար, անշուշտ, հանդիսավոր օր է սա, որը տարիներ առաջ անսահման հեռու էր թվում. հենց այս տոնի մեջ են զուգակցվում տխրությունն ու ուրախությունը՝ ավարտվում է մի փուլ, սկսվում՝ նորը, որը կոչվում է հասունություն: Կանգնած լինելով նրա շեմին՝ դուք այսօր ամենաշատը գնահատում եք այն ամենը, ինչից հիմա պատրաստվում եք հեռանալ՝ դպրոցի դասերը, դասընկերներին և ուսուցիչներին:

Դպրոցական տարիները ձեզ տվեցին որոնումների և բացահայտումների փորձ, սովորելու և ստեղծագործելու բերկրանք ու իհարկե՝ չմոռացվող ընկերություն: Բայց այսօր դուք պարզապես հրաժեշտ չեք տալիս դպրոցին, այլ բացում եք դռները դեպի մեծանալու և անկախ որոշումների, դեպի նոր հնարավորությունների և ձգտումների աշխարհ: Եվ ձեզնից յուրաքանչյուրի համար կարևոր է ճիշտ կողմնորոշվել, թե այսօր բացվող բազում ճանապարհներից որով եք ցանկանում անցնել:

Մաղթում եմ, որ երբեք չզոջաք ընտրության համար և չթերագնահատեք սեփական ունակությունները, համարձակորեն գնաք դեպի ձեր երազանքը, և թո՛ղ լավատեսությունը, հաստատակամությունը և հուսավառությունը միշտ ուղեկցեն ձեզ:

Ցանկանում եմ շնորհավորել նաև մեր հարգարժան ուսուցիչներին և ծնողներին, որոնք գիտելիքի դժվարին ճանապարհով հավասարապես քայլել են ձեզ հետ այս տարիներին, դաստիարակել իրենց օրինակով, գործով, խոսքով:

Սիրելի՛ շրջանավարտներ, ցանկանում եմ, որ արդարացնեք նրանց ակնկալիքները, որպեսզի հպարտանան ու հիանան ձեզնով: Իսկ յուրաքանչյուրիդ այսօրվա հաջողությունը մեր հայրենիքի, մեր մարզի վաղվա կայունությունն ու զարգացումն է:

Բոլորիդ մաղթում եմ հաջողություններ պետական ավարտական և ընդունելության քննություններում, առաջընթաց՝ ընտրած մասնագիտության յուրացման գործում:

Սրտանց ցանկանում եմ, որ գտնեք ձեր կոչումը, լինեք հաջողակ և երջանիկ, ապրեք խաղա՛ղ երկրում:

Բարի՛ երթ 2022-2023 ուստարվա բոլոր շրջանավարտներին: